Տ. ՄՈՄԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(13 մայիսի 2007 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն»:

«Եվ մենք բոլորս բաց երեսով տեսնելով Տիրոջ փառքը ինչպես հայելու մեջ, նույն պատկերով ենք նորոգվում փառքից փառք, որպես թե Տիրոջ Հոգով»:

(Բ Կորնթ. Գ 18)

Այս տողերը, սիրելի հավատացյալ ժողովուրդ, գտնում ենք Պողոս առաքյալի՝ Կորնթացիներին ուղղված երկրորդ թղթի երրորդ գլխում: Առաքյալը խոսում է Տիրոջ փառքի մասին՝ որպես ամեն ինչ իր մեջ և իրենով ցոլացնող երևույթի, որպես նորոգության նախապայմանի և հավատացյալի ու Տիրոջ հոգու միջև գտնվող անքակտելի կապի:

Այո՛, յուրաքանչյուր հավատացյալ իր տարբեր հոգևոր վիճակների մեջ կարիք ունի փոփոխությունների՝ կերպարանափոխությունների, և այդ փոփոխություններն են, որ որակական դառնալով՝ հավատացյալին կանգնեցնում են կատարելության ճանապարհին: Բնության մեջ ևս ամեն ինչ փոփոխվում է, սերմը իր մահով սկիզբ է դնում նոր կյանքի, նոր կրկնության, որ որակապես, անշուշտ, տարբերվում է նախորդից: Այսպես էլ մարդ արարածը իր կյանքի հոլովույթում հոգևոր բազմաթիվ փոփոխությունների է ենթարկվում, բայց ճշմարիտ քրիստոնյան, ականջալուր առաքյալի խոսքին, պիտի հասկանա, որ ինքը նորոգվում է Հիսուսի փառքով, աստվածային զորությամբ ու հավատքով:

Քրիստոնյային վայել մեր նկարագիրը, անշուշտ, ձևավորվում է տևական աշխատանքի, մեր կամքի և մեր Տեր Հիսուս Քրիստոսին անսահման նվիրվելու արդյունքում: Երկու հազարամյակ շարունակ շատերն են մտածել այս մասին, մեր հոգևոր հայրերը ճգնել են գտնել մի միջոց, մի բանաձև՝ մարդ արարածին հոգևոր կատարելություն տանող ճանապարհը ավելի մոտեցնելու համար, սակայն Հիսուսով և Նրա օրինակով ամեն ինչ ասվել է:

Մարդ հանապազ պետք է ապրի սրբակենցաղ կյանքով, աստվածհաճո գործերով, որպեսզի կարողանա առաքյալի մատնանշած «բաց երեսով տեսնել Տիրոջ փառքը, ինչպես հայելու մեջ» և անցնել նորոգության այն ճանապարհով, որ մատնանշել էր մեր Տեր Հիսուս Քրիստոս:

Սիրելի հայրենակիցներ, նորոգության նախապայմանը ճշմարիտ հավատքն է: Միայն հավատքի ուժի շնորհիվ մարդ կարող է դյուրությամբ պատասխանել կյանքի բազմաթիվ հարցադրումներին, այն հարցերին, որոնք աշխարհի արարումից ի վեր հուզում են բոլորիս:

Կատարելության ձգտման այս կանոնը որևէ տեղ այնպիսի ճշգրիտ ձևակերպում չի գտել, ինչպես Պողոս առաքյալի կարճ, բազմաբովանդակ և իմաստուն խոսքերում, որոնք այսօր ընտրել ենք որպես մեր քարոզի բնաբան: Պողոս առաքյալը, դիմելով կորնթացիներին, ցույց է տալիս «միևնույն պատկերին կերպարանափոխվելու», Նրան նմանվելու անհրաժեշտությունը:

Անշուշտ, առաքյալը այստեղ ի մտի ունի մեր Տեր Հիսուս Քրիստոսի կերպարին նմանվելու հանգամանքը: Դեպի լավն ու բարին, գեղեցիկն ու վեհը հասնելու մեր ամենօրյա հոգածությունը, որին մենք ընդառաջ ենք գնում ողջ կյանքում, ձեռք չի բերվում սովորական ուսուցմամբ կամ այլ ջանքերով: Այն իրագործվում է մեր հավատքի ուժով, մեզնից դուրս գտնվող աստվածային միջնորդությամբ: Արդ, սիրելի հավատացյալ ժողովուրդ, ի՞նչ է ակնարկում Պողոս առաքյալը, երբ գրում է, թե «Տիրոջ փառքը մեր մեջ է»:

Առաքյալը «փառք» խոսքի մեջ ի մտի ունի ուղղակիորեն ամենաբարձրյալ մեր Տեր Հիսուս Քրիստոսի ամենազոր և կատարյալ կերպարը, որ կրում է յուրաքանչյուր հավատացյալ իր հոգում ամեն ժամ և ամենուր:

Սիրելի հավատացյալներ, բոլոր ժամանակների համար Հիսուսը եղել է ամենավառ ու պայծառ օրինակը, որին հետևողը գտել է խաղաղություն, ճշմարտություն, կյանք, գտել է մարդկային կյանքի իմաստն ու բովանդակությունը: Փրկիչը կատարյալ է, Նա սիրում է մեզ՝ Աստծո արարածներիս, և ցանկանում է, որ մենք մեր մեջ ցոլացնենք Իր փառքը, Նրանով բնութագրենք իրերն ու երևույթները, Նրանով հասկանանք աշխարհը:

Պողոս առաքյալը իր ողջ կյանքի ընթացքին քարոզեց Տիրոջ փառքը, հավատաց Տիրոջ աստվածային խոսքերի զորությանը և քարոզեց հնազանդություն, Տիրոջ փառքի փառաբանում և ապաշխարություն: Մարդկային հոգին առաքյալի խոսքի համեմատ հայելի է, ուր ցոլանում են մարդու գործերը՝ լավ-վատ արարքները, ուստի պետք է միշտ աշխատենք մեր գործերով լինել շիտակ, մեր հավատքով՝ զորեղ ու աստվածահաճո, որպեսզի մեր հոգու հայելիում կարողանանք պահել աստվածային փառքի արտացոլանքը և ներկայանանք որպես ճշմարիտ հավատացյալներ:

Մարդկային հոգու զարմանալի և խորհրդավոր հատկությունն է նմանվելը, ընդօրինակելը: Իր դարավոր պատմության ընթացքում մարդը, կամա թե ակամա, բնազդով թե գիտակցված, միշտ էլ իր հոգու խորքում ձգտել է լավին ու գեղեցիկին:

Շուրջ երկու հազարամյակ է, որ քրիստոնյա աշխարհը ունի իր կատարելության չափանիշը, բարձրագույն այն կետը, որին ձգտում է մարդ հասնել, նմանվել իր կյանքում: Յուրաքանչյուր քրիստոնյա հավատացյալի ուղեցույցն ու ուղեկիցն է, սիրելի հավատացյալ ժողովուրդ, Հիսուս Քրիստոսի կյանքն ու վարդապետությունը:

Հաղորդակցվելը Քրիստոսի հետ ոչ միայն լուսավորում ու հարստացնում է մեր միտքը, իմացականությունը, այլ նաև հանգստացնում ու խաղաղեցնում մեր սիրտը, զորացնում և ազնվացնում մեր կամքը: Ուրեմն մեզ մնում է ճանաչել Հիսուս Քրիստոսին, գնալ Նրա ետևից, նմանվել Նրան:

Մշտական հաղորդակցությունը Քրիստոսի հետ կերպարանափոխում է մեզ, մաքրում մեղքերից ու տանում առ Աստված: Քրիստոնեության պատմության ընթացքին առ Քրիստոս հաղորդակցվելու և Քրիստոսով վերափոխվելու մի փառավոր օրինակ է Պողոս առաքյալի կյանքը:

Քրիստոնեության մեծ հալածիչը Դամասկոսի ճանապարհին աստվածային հայտնությամբ ճանաչեց մեր Տիրոջը, ընդունեց Նրան և գնաց Նրա ետևից՝ «կերպարանափոխվելով միևնույն պատկերին»: Միևնույն պատկերով կերպարանափոխվելու ձգտումը, սիրելի բարեպաշտ ժողովուրդ, այսօր էլ վառ է մեր բոլորի մեջ: Կան մարդիկ, որոնց լոկ ներկայության շնորհիվ մեր լավ գործերը արժանանում են գնահատանքի, որոնք բարձրացնում, ազնվացնում և մաքրում են մեզ թերություններից: Հիշեցեք ձեր կյանքի տարբեր ժամանակահատվածները: Դուք անպայման կգտնեք օրինակներ, թե ինչպես ձեր ծնողների, ուսուցիչների կամ թե ընկերների նկարագրի ու պահվածքի դրական շատ գծեր այսօր փոխանցվել են Ձեզ:

Սիրելի հավատացյալ ժողովուրդ, արդ, լինենք միաբան, մեր հավատքը, Քրիստոսի պայծառ կերպարը մեզ օրինակ ունենալով և ձգտենք հասնել Նրա աստվածային կատարելությանը՝ Նրանից սովորելով հնազանդություն, ողջախոհություն, հանդուրժողականություն, ներողամտություն, որոնք այսօր մեզ շատ են պետք, և փառք տանք մեր Տիրոջը՝ մեր կատարելության ուղին ցույց տալու համար:

Սիրելի հավատացյալներ, մեծագույն երջանկություն է, երբ դուք շրջապատված եք կատարյալ ճշմարիտ, քրիստոնյայի տիպար հանդիսացող անձերով: Այսօր համայն հայ ժողովուրդը, Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու սպասավորներս և հատկապես մենք՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններս, երիցս երջանիկ ենք, որ հոգևոր մեր սպասավորությունն ենք բերում մեր սիրելի Վեհափառ Հայրապետի՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ի փառավոր գահակալության շրջանին, երբ Հայ Եկեղեցու նավը այսօրվա փոթորկահույզ աշխարհում, Վեհափառ Հայրապետի նավավարությամբ, գտել է իր խաղաղ ու կայուն նավահանգիստը:

Եկեք, սիրելի հավատացյալներ, միասնաբար աղոթենք առ Աստված ու ցանկանք, որ Տերը երկար տարիների քաջառողջ կյանք պարգևի Նորին Սրբությանը, որպեսզի Նորին Սրբության իմաստուն առաջնորդությամբ ավելի զորանա ու հարատևի Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ու նրա հավատացյալ բարեպաշտ ժողովուրդը ի Հայաստան, հԱրցախ և ի սփյուռս աշխարհի:

«*Շնորհ, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ եւ Փրկիչին Հիսուս Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանս. Ամէն*»: